Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2016. պետք է դուրս գալ կոռուպցիայի և անհավասարության արատավոր շրջանից

Շատ երկրներում պոպուլիստ քաղաքական գործիչների առաջխաղացումը նախազգուշական նշան է

Բեռլին, 25 հունվարի, 2017թ. – 2016 թվականը ցույց տվեց, որ համակարգային կոռուպցիան և սոցիալական անհավասարությունը փոխադարձաբար նպաստում են մեկը մյուսի ուժեղացմանը՝ ծնելով համատարած հասարակական հիասթափություն ներկա քաղաքական վերնախավերից և պարարտ հող ստեղծելով պոպուլիստ քաղաքական գործիչների առաջխաղացման համար:

Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) 2016 թվականի դասակարգման աղյուսակում ներառված 176 երկրների 69 տոկոսի համաթվի արժեքները ցածր են 50 միավորից 0-ից (բացարձակ կոռումպացված) 100 (բացարձակ մաքուր) սանդղակում՝ցույց տալով, թե որքանով խորն ու համատարած է հանրային ոլորտում կոռուպցիան ողջ աշխարհում: Այս տարի ավելի շատ երկրներ նահանջ են արձանագրել, քան առաջընթաց՝ հրատապ դարձնելով շտապ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Բացակայում են բոլորի համար հավասար հնարավորությունները

Կոռուպցիան և սոցիալական անհավասարությունը սնում են իրար՝ ծնելով կոռուպցիայի և հասարակության ներսում ազդեցության ու հարստության անհավասար բաշխման միջև արատավոր շրջան: Ինչպես ցույց տվեց Պանամայի օֆշորային սկանդալը, հարուստների և իշխանավորների համար դեռևս չափից դուրս հեշտ է հարստանալ ի հաշիվ հանրային բարիքի՝ օգտագործելով համաշխարհային ֆինանսական համակարգի ոչ թափանցիկ լինելը:

«Չափազանց շատ են այն երկրները, որտեղ մարդիկ զրկված են իրենց առավել հիմնարար կարիքները բավարարելուց և կոռուպցիայի պատճառով ամեն երեկո սոված պառկում են քնելու, այն դեպքում, երբ հզորները և կոռումպացվածները անպատիժ կերպով ապրում են ցոփ կյանքով,- ասում է պարոն Խոսե Ուգազը՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլի նախագահը, ավելացնելով,- մենք չենք կարող վատնել մեր թանկարժեք ժամանակը: Անհրաժեշտ է շտապ կերպով կանգնեցնել կոռուպցիան, որպեսզի մարդկանց կյանքը բարելավվի ողջ աշխարհով մեկ»:

Էլիտար կոռուպցիայի դեպքերը՝ սկսած Բրազիլիայի Պետրոբրազի և Օդեբրեխտի սկանդալներից և վերջացած Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչով, ցույց են տալիս, որ բիզնեսի և քաղաքականության միջև սերտաճումը ազգային տնտեսություններից դուրս են մղում միլիարդավոր դոլարների եկամուտներ՝ ուղղելով դրանք մի քանիսի գրպանները՝ի վնաս մեծամասնության: Համակարգային էլիտար կոռուպցիայի այս տեսակը խախտում է մարդու իրավունքները, արգելակում է կայուն տնտեսական զարգացումը և սնում է սոցիալական մեկուսացվածությունը:

Օրինակ, Բրազիլիայի ԿԸՀ արժեքը վերջին հինգ տարիների ընթացքում էապես նվազել է՝ բարձրաստիճան քաղաքական պաշտոնյաների և գործարարների ներգրավմամբ մեկը մյուսի հետևից տեղի ունեցող կոռուպցիոն սկանդալների ֆոնի վրա: Մյուս կողմից, երկիրը 2016 թվականին ցույց տվեց, որ անկախ իրավապահ մարմինների աշխատանքի շնորհիվ հնարավոր է պատասխանատվության կանչել նրանց, ովքեր նախկինում ընկալվում էին որպես անձեռնմխելի անձինք:

Պոպուլիզմը սխալ դեղամիջոց է

Մարդիկ կշտացած են չափից դուրս մեծ թվով քաղաքական գործիչների կոռուպցիայի դեմ պայքարի դատարկ խոստումներից, և նրանցից շատերն իրենց հայացքներն ուղղում են պոպուլիստ քաղաքական գործիչներին, որոնք խոստանում են փոխել համակարգը և կոտրել կոռուպցիայի և արտոնությունների փակ շղթան:

Ինչպես նշում է պարոն Ուգազը, «պոպուլիստ կամ ավտորիտար առաջնորդներ ունեցող երկրներում մենք հաճախ տեսնում ենք ժողովրդավարության նահանջ և քաղաքացիական հասարակությունը ճնշելու, մամուլի ազատությունը սահմանափակելու և դատական իշխանության անկախությունը թուլացնելու մտահոգիչ փորձեր: Իրենց երկրներում առկա կլանային կապիտալիստական համակարգը վերացնելու փոխարեն այդ առաջնորդները սովորաբար հաստատում են ավելի վատ տեսակի կոռումպացված համակարգեր: Միայն այնտեղ, որտեղ առկա են խոսքի ազատություն, քաղաքական գործընթացների թափանցիկություն և ուժեղ ժողովրդավարական ինստիտուտներ, քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցները կարող են ստիպել հաշվետու լինել իշխանավորներին և հաջողությամբ պայքարել կոռուպցիայի դեմ»:

Վերջին տարիներին ԿԸՀ համաթվի արժեքներն էապես վատացել են ավտորիտար առաջնորդներ ունեցող այնպիսի երկրներում, ինչպիսիք են Թուրքիան կամ Հունգարիան: Ի հակադրություն դրանց՝ Արգենտինայի ԿԸՀ արժեքը սկսեց բարելավվել այն բանից հետո, երբ հեռացվեց այնտեղի պոպուլիստական կառավարությունը:

Ինչ պետք է անել

Միայն հակակոռուպցիոն օրենսդրության բարելավումը բավարար չէ: Անհրաժեշտ է շտապ կերպով իրականացնել արմատական համակարգային բարեփոխումներ, որոնք էապես կնվազեցնեն իշխանության և հարստության աճող անհավասարությունը և կօժտեն քաղաքացիներին բավականաչափ ազդեցությամբ՝ վերջ տալու համատարած անպատժելիությանը, պատասխանատվության կանչելու հզորներին և ունենալու իրական դեր այն որոշումների կայացման գործում, որոնք ազդեցություն են ունենում իրենց առօրյա կյանքի վրա:

Այդ բարեփոխումները պետք է ներառեն հանրային ռեգիստրների միջոցով ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտումը, ինչպես նաև սահմանեն պատժամիջոցներ այն պրոֆեսիոնալ «միջնորդների» նկատմամբ, ովքեր հանցավոր կերպով ներգրավված են մի երկրից մյուսը կեղտոտ փողերի հոսքերը կազմակերպելու մեջ:

Արդյունքներ

2016թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը ցույց է տալիս աշխարհի 176 երկրներում հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալումը:

Առաջատարները ԿԸՀ 90 միավորով Դանիան և Նոր Զելանդիան են, որոնց անմիջապես հաջորդում են Ֆինլանդիան (89 միավոր) և Շվեդիան (88 միավոր): Չնայած աշխարհի և ոչ մի երկիր զերծ չէ կոռուպցիայից, դասակարգման աղյուսակի վերին հորիզոնականներում գտնվող երկրներն ունեն մի շարք ընդհանուր հատկանիշներ, այն է՝ բաց կառավարություն, մամուլի ազատություն, քաղաքացիական իրավունքներ և անկախ դատական իշխանություն:

Արդեն 10 տարի անընդմեջ ամենավատ արդյունքը ցույց է տալիս Սոմալին, որի ԿԸՀ այս տարվա միավորը հավասար է 10-ի: Ներքևից երկրորդն է Հարավային Սուդանը (11 միավոր), որին հաջորդում են Հյուսիսային Կորեան (12 միավոր) և Սիրան (13 միավոր): Դասակարգման աղյուսակի ստորին մասում գտնվող երկրներին բնորոշ են կոռուպցիոն հանցագործությունների համար համատարած անպատժելիությունը, վատ կառավարումը և թույլ ինստիտուտները:

Անհանգիստ տարածաշրջաններում, մասնավորապես, Մերձավոր Արևելքում, գտնվող երկրներն այս տարի ունեցել են ամենամեծ նահանջը: 2016 թվականին 2015 թվականի համեմատությամբ ողջ աշխարհում ամենամեծ նահանջն արձանագրեց Քաթարը, որի ԿԸՀ արժեքը նվազեց միանգամից 10 միավորով: «ՖԻՖԱ-ի հետ կապված սկանդալները, մասնավորապես, 2022 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնությունը Քաթարում անցկացնելու որոշման հետ կապված հետաքննությունը և այնտեղ աշխատող միգրանտների իրավունքների խախտումների վերաբերյալ զեկույցները հստակ կերպով ազդել են այդ երկրում առկա կոռուպցիայի ընկալման վրա», – ասում է պարոն Ուգազը: